

Բացատրագիր

Շինարարության կազմակերպման նախագիծը մշակված է [redacted] ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա N [redacted], տեղանքի 1:500 մասշտաբի գեոդեզիական հանույթի, ճարտարապետական և կոնստրուկտորական գծագրերի հիման վրա : Վերակառուցվող վշակույթի սառնը գտնվում է Երևան քաղաքի Գ.Քուչակի հասցեով: Հողամասը ներկայումս կառուցապատված չէ, ունի 3 671.3 մ² մակերես: Օբյեկտը երկու հարկանի կառույց է հետևյալ ցուցանիշներով.

Բնութագիր	Չափի միավոր	Քանակը	Նկուղային հարկ	Առաջին հարկ	Երկրորդ հարկ
Ընդհանուր մակերեսը	մ ²			921.2	921.2
Շինարարական ծավալ	մ ³	8291	-	-	-

Շինարարության իրականացման համար պահանջվում են հետևյալ հիմնական նյութերը.

Անվանումը	Չափի միավոր	Քանակը
Բետոն	մ ³	
Ամրան A-I, A-III	տ	

Շինարարության տևողությունը հաշվարկված է համաձայն ՀՀԽՄ 1.04.03-85 և կազմում է 24 ամիս: Աշխատանքների ժամկետները և հերթականությունը տրված են ներքո տրված ժամանակացույցում:

Կազմակերպչական-տեխնոլոգիական սխեմաներ

Բոլոր տիպի շին-մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները եւ նախագծի տեխնիկական պայմանները: Օբյեկտի շինարարությունը ըստ ՀՀԽՄ 3.01.01-85-ի (շինարարության կազմակերպման արտադրություն) իրականացվում է 2 փուլով

- Նախապատրաստական փուլ
- Հիմնական փուլ

Նախապատրաստական փուլում իրականացվում են հետևյալ աշխատանքները`

- գեոդեզիական նշահարում
- ժամանակավոր ցանկապատի, հետիոտնի անցումի և կենցաղ-գրասենյակային պայմանների կազմակերպում
- ժամանակավոր ինժեներական կոմունիկացիաների անցկացում

Շինարարության կենսապահովման ցանցերի տեղադրման աշխատանքները իրականացնել` համաձայն շահագործող կազմակերպությունների կողմից տրված ժամանակավոր տեխնիկական պայմանների (էլեկտրամատակարարում 15 կՎտ (380Վոլտ), ջրամատակարարում արտադրական եւ կենցաղային նպատակով 2.0 մ3/օր, կոյուղի 0.2 մ3/օր):

Շինհրապարակը համալրվում է հակահրդեհային ինվենտարով: Շինհրապարակը լուսավորվում է լուսարձակիչներով:

Աշխատանքները իրականացնել կապալառուի կողմից աշխատանքների կատարման նախագիծը կազմելուց հետո, որտեղ ըստ ՀՀԽՄ 111-4-80 հատուկ պետք է նշվեն անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանման ցուցմունքները նեղված պայմաններում աշխատելու ժամանակ:

Հողային և հիմքերի պատրաստման աշխատանքներ

Հողային և հիմքերի պատրաստման աշխատանքները կատարել համաձայն աշխատանքային նախագծի և ՀՀԽՄ 3.02.01-87 «Հողային կառուցվածքներ և հիմքեր»-ի:

Փոստրակման և խրամուղիների մշակման համար առաջարկվում է հետ-բահ 0.5մ3 ծավալի շերտավոր CAT մակնիշի էքսկավատոր: Հիմքերի տակ 10-15 սմ շերտերը մշակվում են ձեռքով: Հետ լիցքը կատարվում է ձեռքով բնահողի շերտ-շերտ տոփամուճով: Մինչև հիմքերի իրականացումը, հիմնատակը պետք է ընդունվի ակտով երկրաբանի, նախագծող կազմակերպության ներկայացուցչի, տեխնիկական հսկողություն իրականացնողի, կապալառուի ներկայությամբ և հաստատվի պատվիրատուի կողմից:

Կրող եւ պատող կոնստրուկցիաներ

Կրող եւ պատող կոնստրուկցիաների շինմոնտաժային աշխատանքները կատարել, պահպանելով ՀՀԽՄ 3.03.01-87-3, ՀՀԽՄ 111-4-80 և աշխատանքային գծագրերի պահանջներին համապատասխան:

Նախագիծը մշակված է միաձույլ երկաթ-բետոնե կոնստրուկցիաներով: Ամրանային իրերը պատրաստվում են կենտրոնացված պոլիգոններում: Երկաթբետոնե կոնստրուկցիաների բետոնացման նպատակով համապատասխան դասի ապրանքային բետոնը պատվիրվում է բետոնային հանգույցում: Բետոնը, շաղախը օբյեկտ են բերվում թափքը պտտվող մեքենաներով: Բետոնը ավտոմոբիլային բետոնապոմպի օգնությամբ մղվում է և պարտադիր խտացվում է խորքային թրթռիչների օգնությամբ: Մնացած նյութերը բերվում են մեքենաներով :

Ապահովել բետոնի խնամքը թե ամառային և թե ձմեռային պայմաններում ըստ նորմատիվների: Հաճախակի կատարել բետոնի մակնիշի ստուգումներ լաբորատոր պայմաններում, այդ նպատակով վերցնել մնուշ խորանարդիկներ:

Տանիքային , հատակի և հարդարման աշխատանքներ

Նշված աշխատանքները կատարել ՀՀԽՄ 3.04.01-87, ՀՀԽՄ 111-4-80 և աշխատանքների կատարման նախագծի պահանջներով: Հատակը և հարդարման աշխատանքները իրականացնել տանիքածածկային և ապակեպատման աշխատանքներից հետո:

Հակահրդեհային անվտանգության կանոններ

Շինհրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային պաշտպանության կանոններով և պահանջներով: Պատասխանատվությունը կրում է շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Ժամանակավոր շինությունները տեղադրել ըստ շին.գլխ.հատակագծի: Հակահրդեհային նպատակներով տեղադրված սարքերը (հիդրանտներ, ինվենտար) պետք է լինեն գործող վիճակում եւ ազատ լինեն մոտեցման համար:

Շրջակա միջավայրի պահպանման կանոններ

Շինարարական տրանսպորտը` շին. մեքենաները օբյեկտ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով, չախտոտելով ճանապարհները շինարարական աղբով:

Հողային աշխատանքների կատարման ժամանակ գոյություն ունեցող բուսական հողը պահեստավորել, հետագայում բարեկարգման նպատակներով օգտագործելու նպատակով: Թույլ չտալ ինքնահոս ջրի հոսք:

Հաշվի առնելով, որ օբյեկտը գտնվում է քաղաքի բարեկարգ մասում, շինարարները պետք է ամենայն խնամքով վերաբերվեն շրջապատին: Շինարարության ավարտի հետ կատարել բարեկարգում և հնարավոր կանաչապատում:

 «ՏԱՎՐՈՒ» ՍՊԸ	ՆԳՏ	Է.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ Գ.ՔՈՒԾԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ Տ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ				
	ՆԱԽԱԳԾԵՑ	Ռ. ՏՈՒՅԱՆ					
				ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	Փուլ	Թերթ	Դ
					ԱՆ	ՇԿ-1	
		ՊԱՏԿՈՒՄՈՒ «ՀՀ ԶԱՂԱԶԱՇԽՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾԻԳ» ՊԶ		ԲԱՅԱՏՐԱԳԻՐ			